

**19)** S. Schneider: Die Deutsche Bagdad-Bahn und die projectirte Überbrückung des Bosporus, Wien—Leipzig. Verlagsbuchhandlung L. Weiss.

Այս շքեղ հրամարակութիւնը բաղկացած է 146 մեծագիր երեսներից և իր մէջ պարունակում է երկու քարտէզ (Փոքր-Ասիայի) և 5 պատկեր (Բոսֆորի կամուրջը, Զմիւռնիա, Անդորա, Կոնիա, Բաղդադ):

Հեղինակը մի առանձին ոգեսորութեամբ պատկերացնում է կուլտուրական այն մեծ նշանակութիւնը, որ ունենալու է այդ գիծը թէ Տաճկաստանի և թէ ամբողջ Եւրոպայի համար: Նա մի ուժեղ հարուած է տալու տեղական ժողովրդի կեանքին և կենսասուու ոյժ է ներչնչելու «հիւանդ մարդուն»:

Բաղդադի երկաթուղին ունենալու է 1600 կիլոմետր երկարութիւն և անցնելու է հետեւեալ ուղղութեամբ՝ Կոնիայից դէպի Աղանա, որ արդէն երկաթուղու գծով միացած է Միջերկրական ծովի հետ և պատերազմական մի նշանաւոր կենարոն է ներկայացնում: Աղանայից գիծը կ'ուղղուի դէպի Ռուֆա (Նախիլին Եղեսսիա) և Դիարբեկիր (Այսթապի և Բերեջեկի գրայով), և այդտեղից Տիգրիսի ափով, Մօուլ, Երբիլ, Կերկու, Դելի-Արասի վրայով դէպի Բաղդադ և Բասսորա: այսուեղ գիծը կը բաժանուի երկու ճիւղի, որոնցից մէկը կ'ուղղուի դէպի Էլ-Մուխամմերիի, իսկ միւսը—դէպի արաբական Էլ-Կուվեյտ և աւահանգիստը:

Սակայն այդ բոլորը հսկայական ձեռնարկութեան միայն մի մասն է կազմում: Պակաս ուշագրաւ չէ և միւս մասը, այսինքն Բոսֆորի կամուրջը, որ ունենալու է 600 մետր երկարութիւն և միացնելու է Պոլիսը Փոքր-Ասիայի հետ: Այդ կամուրջը գառնալու է իր բազմաթիւ մինարեսներով ու զիշերային հրավառութեամբ համաշխարհային մի նոր հրաշալիք, իսկ անընկծելի պատերով.—աշտարականման ամրութիւններով, մի անյաղթելի պատմէշ «փաղիշահի» թշնամիների դէմ:

Բաղդադի երկաթուղու համաշխարհային մեծ նշանակութիւնը ցոյց տալու համար պ. Ծնայդէրն ի միջի այլոց մատնանիշ է անում այն իրողութիւնը, որ այդ գիծը չափազանց հեշտացնելու և կրծատելու է Հնդկաստանի ճանապարհը: Երակարծիքով այդ ճիւղով կարելի է համնել կապչատափից և Զանգիբարից մինչև Պետերբուրգ—16 օրում, Տօնկինից Փարիզ—15 օրում և Կալկուտայից Համբուրգ 12 օրում:

Հեղինակը նկարագրում է երկաթուղու գլխաւոր կայ-

րանները, շրջապատող գաւառների բնական հարստութիւնները, աղքաբնակութեան բնորոշ առանձնայատկութիւնները, Գերմանիայի քաղաքականութիւնն արևելքում, և գալիս է այն եղրակացութեան, որ գերմանական կապիտալի և հնարազիտութեան միջոցով կարելի պիտի լինի Փոքր-Ասիան ծաղկած դրութեան հացնել, նրա անտառապահութիւնը, երկրագործութիւնը բարեկարգել, հանքերն ու միւս բնական հարստութիւնները շահագործել, յաճախ կրկնուող խլրտումները վերացնել, — մի խօսքով Տաճկաստանին այժմնան մեռելային դրութիւնից քաղաքակրթութեան ու առաջադիմութեան գիրկը նեռնել...

Դ. Շնայդէրն իր գրքում նոյն իսկ փաստաբանի դեր է կատարում, աշխատելով արդարացնել թիւրքերի յետամացութիւնն ու բռնակալութիւնը:

Նրա կարծիքով թիւրքերը կենսունակ և ընդունակ ժողովուրդ են, միայն «ասիացիութիւնն» է նրանց վատ յատկութիւնների պատճառը. իսկ թէ ինչ բան է կամ թէ ինչումն է կայանում այդ «ասիացիութիւնը»—միայն Ալլահը գիտէ, որովհետև ինքը հեղինակը չէ պարզում հարցը...

Թարով հայերին, հեղինակը վկայում է նրանց տոկունութիւնը, վաճառականական ընդունակութիւնը, աշխատասիրութիւնը և միւս յատկութիւնները. բայց միենոյն ժամանակ չէ մոռանում հայկական սարսափները քաղաքական առասպել անուանել և հայոց հոգևորականութիւնը մոլեսանդ ու քրիստոնէութեան անունն արատաւորող համարել: Նրա կարծիքով նրեանը «հայ փախստականների» բունն է կազմում, իսկ էջմիածինն ու Հայոց կաթողիկոսը—ուստաց քաղաքականութեան գործիքը:

Դժբախտաբար նա իր կարծիքները հաստատելու համար փաստեր ու ապացոյցներ չէ բերում, այնպէս որ բանիմաց ընթերցողին մնում է այդ երեսյթի պատճառը վերագրել կամ սուլթանական հիւրասիրութեանը \*), կամ հեղինակի ծայրայեղ շօվինիզմին:

Սւելի հաւանական է երկրորդը, որովհետև գրքի մէջ սկզբից մինչև վերջը գերմանական քաղաքականութիւնն ու առհասարակ գերմանացիները պատկերացրած են իրեն մի հզօր ոյժ, որ առանց աշխարհակալական ձգտումների աշխատում է միայն կուլտուրա տարածել (sic!), երկրի արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը զարգացնել և ընդհանրապէս Տաճկաստանի հետ բարեկամական առևտուր ունենալ:

Իսկ իտուսիան, հեղինակի կարծիքով, ընդհակառակը չա-

\*) Հեղինակն իր աշխատութիւնը մշակել է Պոլսում—1900 թ. ամառը.

փազանց վտանգաւոր հարևան է, որովհետև ձգտում է տիրապետել Հայաստանը և առհասարակ ճնշել Տաճկաստանին:

Սակայն այստեղ էլ գերմանական ձեռնարկութիւնը մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ Տաճկաստանին, որովհետև շինելիք երկաթուղիների յանցը պիտի բարձրացնէ նրա տնտեսական ոյժը և անհրաժեշտ դէպում արագ կերպով պիտի փոխադրէ տաճկական զօրքն ու ուղամամթերքները դէպի սահմանը, դէպի պատերազմ ընդդէմ կազակների:

Հեղինակի կարծիքով Տաճկաստանն այդ բարիքները հեշտութեամբ կը կարողանոյ վայելել, եթէ Փոքր-Ասիայում գերմանական գաղութներ հաստատուեն:

Ընդհանուր առմամբ պ. Ծնայդէրի աշխատութիւնն արժանի է ուշագրութեան իր մի քանի հետաքրքիր տեղեկութիւններով, որոնք աւելի մեծ արժեք կ'ունենային, եթէ հեղինակի քարոզչական տօնն ու աղաւաղումները չը լինէին...

#### Ե. ԹՈՓՁԵԱՆ

### Ս Պ Ա Ռ Ո Ւ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Բ

Ընթերցողը չի զարմանալ արդեօք, եթէ ասենք, որ այժմս հայերէն պիտանի դրերի սով է: Ամբողջ տարի է բոլորում, իսկ մեր աղքատիկ գրականութեան վրայ չեն աւելանում երեք կարգին գիրք, մինչդեռ՝ դրա փոխարէն, եղած շէնք ու չնորհքով գրերն էլ «մնաս բարեւա» ասելով այլ ևս չեն կենդանանում վերսին տպագրութեամբ:

Ներկայումս մեր մի քանի յայտնի հեղինակների գրուածները հարապարակի վրայ ծախու չունինք բոլորովին. Դրանք սպառուած են թէ հեղինակների մօտ և թէ գրավաճառանոցներում: Փաստերին դիմենք. Բաֆփու «Սամուէլ», «Կայծեր», «Դաւիթ բէկ», «Գունջ», «Ուկի աքաղաղ», «Ղարաբաղի աստղագէտ», «Արծիւ Վասպուրականի», «Հայ կինը և հայ երիտասարդութիւնը» վէպերը սպառուած են. հատնելու վրայ են «Ծենթ և Զալաէդղին», «Խամսայի մնիքութիւններ», «Վէպիկներ և պատկերներ», «Խաչագողի յիշատակարան», «Մինն այսպէս, միւսն այնպէս» գրուածները: Պոչեանցի «Հայի ինդիր», «Սօս և Վարդիթեր», «Եահէն» գրերը շատ տարիներ է ինչ սպառուած են: Սմբատ Շահաղիզեանի «Լուսնի վիշտը», «Հրապարակախօս ձանը», «Ա-